Գ. 654-Ա/2 41.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N398

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «09» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Եղիազարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակների հոբելյանական միջոցառումների շրջանակներում «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի, «Թումանյանի հեքիաթները» (պարսկերեն) և «Թումանյանի քառյակները» (արաբերեն) գրքերի հրատարակման հետ կապված ծախսերին՝ համաձայն Պատվիրատուի կողմից հաստատված ծրագրի և սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի (հավելված N 1), ինչպես նաև համապատասխան փորձագիտական հանձնաժողովի կողմից հաստատված NN 2, 3 հավելվածների և փորձագիտական եզրակացության NN 1, 2 ձևերի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով (22.08.2019 թվականի ՀՀ Կառավարության 1084-Ն որոշում) «1168. Արվեստների ծրագրի» «11015. Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակների հոբելյանական միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի, նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված աշխատանքների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը, իսկ բովանդակայինը՝ տեղեկատվություն աշխատանքների իրականացման մասին:

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին ենթակետում նախատեսված գումարի 1 տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ գրքերի հրատարակման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով և նախահաշվով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.9. Սույն Պայմանագրով նախատեսված գրքերի խմբագրության տվյալներում նշագրել «Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ»:

2.3.10. Տպագրական աշխատանքները սկսելուց առաջ՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը, գրքերի մակետները ներկայացնել Պատվիրատուի հաստատմանը՝ կցելով համապատասխան փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը (ձևN 1):

2.3.11. Սույն Պայմանագրով սահմանված ժամկետում Պատվիրատուին հանձնել յուրաքանչյուր հրատարակված գրքի տպաքանակի 20 %-ը, իսկ մնացած օրինակները տնօրինել ինքնուրույն՝ բաշխումը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

2.3.12. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների գույքային բացառիկ իրավունքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 8406.0 հազար (ութ միլիոն չորս հարյուր վեց հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հաստատված նախահաշվի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, Կատարողի գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն՝ համաձայն հավելված N 3-ի:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝ օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2020 թվականի հունվարի 31-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի փետրվարի 25-ը:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 15 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն Պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011028710
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մոսկովյան 40
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001371
ՀՎՀՀ 02511865
Հեռ.՝ 010 56 00 21, 093 82 58 13

Տնօրեն՝

---------- Ա. Եղիազարյան

Կ.Տ.

Հավելված N 1
2019 թ. « 09 » «23 »
N398 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի, «Թումանյանի հեքիաթները» (պարսկերեն) և «Թումանյանի քառյակները» (արաբերեն) գրքերի հրատարակման հետ կապված ծախսերի

N	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի հրատարակում՝** 700 օրինակ x 4907.1 դրամ = 3435.0 հազ. դրամ *ԱԱՀ՝ 687.0 հազ. դրամ*	4122.0
2.	**«Թումանյանի հեքիաթները» (պարսկերեն) գրքի հրատարակում՝** 500 օրինակ x 3250 դրամ = 1625.0 հազ. դրամ *ԱԱՀ՝ 325.0 հազ. դրամ*	1950.0
3.	**«Թումանյանի քառյակները» (արաբերեն) գրքի հրատարակում՝** 700 օրինակ x 2778.6 դրամ = 1945.0 հազ. դրամ *ԱԱՀ՝ 389.0 հազ. դրամ*	2334.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8406.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011028710
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մոսկովյան 40
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001371
ՀՎՀՀ 02511865
Հեռ.՝ 010 56 00 21, 093 82 58 13

Տնօրեն՝

_____ Ա. Եղիազարյան

Կ.Տ.

Հավելված N 2
2019 թ. « 09 » « 23 »
N 398 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ N 1

Աշխատանքի անվանումը՝ «Թումանյանի հեքիաթները» (պարսկերեն)

Հ/Հ	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1.	**Հրատարակչական աշխատանքի էության համառոտ շարադրանքը**	Ժողովածուն ներառում է Թումանյանի հեքիաթները պարսկերեն թարգմանությամբ:
2.	**Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 21 x 22 սմ (+- 1սմ) Ծավալը՝ 112 էջ Տպաքանակ՝ 500 օրինակ Միջուկի թղթի տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 150 գրամ Շապիկը՝ կոշտ
3.	**Հրատարակչական աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4.	**Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը (ազդօրինակը), ինչպես նաև երկկողմանի տպագրված թղթի նմուշը, որոնք ստորագրությամբ հաստատվում են կողմերի կողմից և Պատվիրատուի մոտ պահվում մինչև տպաքանակի ընդունումը: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում:

Պատվիրատու՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ. Տ.

Կատարող՝

«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Ա. Եղիազարյան

Կ. Տ.

Փորձագիտական հանձնաժողովի

նախագահ՝ _____

Հավելված N 2
2019 թ. « 09 » « 23 »
N 398 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ N 2

Աշխատանքի անվանումը՝ «Թումանյանի քառյակները» (արաբերեն)

Հ/Հ	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1.	**Հրատարակչական աշխատանքի էության համառոտ շարադրանքը**	Ժողովածուն ներառում է Թումանյանի քառյակները արաբերեն թարգմանությամբ:
2.	**Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափսը՝ 14 x 10 սմ (+- 1սմ) Ծավալը՝ 95 էջ Տպաքանակ՝ 700 օրինակ Միջուկի թղթի տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 90 գրամ Շապիկը՝ կոշտ
3.	**Հրատարակչական աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4.	**Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը (ազդօրինակը), ինչպես նաև երկկողմանի տպագրված թղթի նմուշը, որոնք ստորագրությամբ հաստատվում են կողմերի կողմից և Պատվիրատուի մոտ պահվում մինչև տպաքանակի ընդունումը: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում:

Պատվիրատու՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ. Տ.

Կատարող՝

«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Ա. Եղիազարյան

Կ. Տ.

Փորձագիտական հանձնաժողովի

նախագահ՝ _____

Հավելված N 2
2019 թ. « 09 » « 23 »
N 398 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ N 3

Աշխատանքի անվանումը՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում»

Հ/Հ	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1.	**Հրատարակչական աշխատանքի էության համառոտ շարադրանքը**	Ժողովածուն ներառում է Թումանյանի մասին ժամանակակիցների հուշերը:
2.	**Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափսը՝ 22 x 15 սմ (+- 1 սմ) Ծավալը՝ 615 էջ Տպաքանակ՝ 700 օրինակ Միջուկի թղթի տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 90 գրամ Շապիկը՝ կոշտ
3.	**Հրատարակչական աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀUS 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4.	**Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը (ազդօրինակը), ինչպես նաև երկկողմանի տպագրված թղթի նմուշը, որոնք ստորագրությամբ հաստատվում են կողմերի կողմից և Պատվիրատուի մոտ պահվում մինչև տպաքանակի ընդունումը: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին 10-օրյա ժամկետում:

Պատվիրատու՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ. Տ.

Կատարող՝

«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Ա. Եղիազարյան

Կ. Տ.

Փորձագիտական հանձնաժողովի

նախագահ՝ _____

Հավելված N 3
2019 թ. « 09 » « 23 »
N 398 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
հասցե Կառավարության տուն 2
հհ 900011028710, հվհհ 02698732

ԿԱՏԱՐՈՂ
«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ

հասցե՝ ք. Երևան, Մոսկովյան 40
հհ 900018001371, ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հվհհ 02511865, հեռ.՝ 010 56 00 21, 093 82 58 13

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի կնքման ամսաթիվը « » « » 2019 թ. Պայմանագրի համարը
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի և Կատարողը՝ ի դեմս «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Եղիազարյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի պատասխանատու ստորաբաժանման թիվ ------ եզրակացությունը այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2019 թ-ից « » « » 2019 թ. ընկած ժամանակահատվածում իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանք-ների համառոտ նկարա-գիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները /օրինակ/	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
Ընդամենը			

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ - ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց՝

ազգանուն Ա. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ. Տ

Աշխատանքը ընդունեց՝

ազգանուն Ն. Հարությունյան

/ստորագրություն/
Կ. Տ

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝
Հ. Սարիբեկյան
/ստորագրություն/
Կ. Տ

Ձև N 1

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՒԼԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«___» «_____» _____ թ.

Պայմանագրի անվանումը՝ «Դրամաշնորհի հատկացման»

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» « ____ » _____ թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարողի անվանումը՝ _____

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում կյատարողի՝ «____» «_____» 2019 թ-ից «_____» «_____» _____ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրած աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովը եզրակացնում է.

N	Գրքի հեղինակը, անվանումը	Մակետի համապատասխանությունը տեխնիկական բնութագրին[1]	Գրքի հեղինակ (ներ)ի, թարգմանիչ(ների), նկարազարդող(ներ)ի և այլոց հետ հեղինակային իրավունքը կարգավորվող փաստաթղթերով կարգավորվածությունը[2]

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս ենք _____ եզրակացություն[3]:

Փորձագիտական հանձնաժողովի
նախագահ՝ _____

---

[1]. Լրացվում է՝ «համապատասխանում է» կամ «չի համապատասխանում»: Անհամապատասխանությունների դեպքում, թե կոնկրետ որ չափանիշներին չի համապատասխանում:
[2]. Լրացվում է «կարգավորված է» կամ «չի կարգավորված»: Չկարգավորված լինելու դեպքում նշվում է, թե կոնկրետ ում հետ:
[3].Նշվում է «դրական» կամ «բացասական»

Ձև N 2

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«___» «_____» _____ թ.

Պայմանագրի անվանումը՝ «Դրամաշնորհի հատկացման»

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « ____» « ____ » _____ թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կատարողի անվանումը՝ _____

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում կատարողի «___» «_____» 2019 թ-ից «____» «_____» _____ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրած աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովը եզրակացնում է.

N	Գրքի հեղինակը, անվանումը	Տպաքանակի համապատասխանությունը տեխնիկական բնութագրի պահանջներին[4]	Հրատարակված գրքի ընդհանուր տպաքանակը	Պատվիրատուին հանձնման ենթակա տպաքանակը

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս ենք _____ եզրակացություն[5]:

Փորձագիտական հանձնաժողովի
նախագահ՝ _____

4.Լրացվում է՝ «համապատասխանում է» կամ «չի համապատասխանում»: Անհամապատասխանությունների դեպքում՝ մասնավորապես որ չափանիշներին չի համապատասխանում:
5.Նշվում է՝ «դրական» կամ «բացասական»:

_____